№ 10 ՕԳՈՍՏՈՍ 1894

ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԵՐ ԾՐԱԳԻՐԸ

Օգոստոս, 1894

Այն ժամանակից, երբ մարդկութիւնը ոտ է դրել քաղաքակրթութեան ուղիի վրայ, այն ժամանակից, երբ նա սկսել է ունենալ իր պատմութիւնը, մենք տեսնում ենք ամեն տեղ և ամեն ժամանակ իշխողներ ու հպատակներ, կեղեքողներ ու կեղեքվողներ, տանջողներ ու տանջվողներ։ Տառապեալների լաց ու կոծի, աշխատաւորի ծանր տնքոցի հետ միասին ամեն տեղից մեր ականջին են հասնում ձրիակեր իշխողների ցնծական աղաղակները։ Այսպէս է եղել անցեալում, այսպէս է այժմ, սակայն այդպէս չի լինի ապագայում,— մենք հաւատացած ենք դրանում։ Մենք շատ լաւ տեսնում ենք, թէ ինչպէս իշխող դասակարգերն ընկնում են աւելի և աւելի թէ ֆիզիքապէս և թէ բարոյապէս, ինչպէս աշխատանքը ձեռք է ձգում հետզհետէ իր իրաւունքները, ինչպէս կեղեքվող տարրը հսկայական քայլերով մօտենում է իր վերջնական յաղթութեան։ Եւ նա կը հասնի կատարեալ յաղթութեան, երբ կը վերանան ամեն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցները և արդիւնքը կը դառնան աշխատաւորի կատարեալ սեփականութիւն, երբ մարդկանց կառավարութեան իր փոխարինի իրերի կառավարութիւնը։

Բայց ինչպէս կարելի է հասնել այդ բաղձալի ապագային։

Կար ժամանակ, երբ մարդկութեան բոլոր ցաւերը բուժելու, տիրող անհաւասարութիւնը ջնջելու, եղբայրութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն հաստատելու համար մարդկութեան ըէֆորմատորներն երևան էին գալիս այս կամ այն վարդապետութիւնով, իր որոշ „հաւատոյ հանգանակներով“։ Համոզված իրենց վարդապետութեան արդարութեան մէջ, ոգևորված վեհ զգացումներով, պատրաստ կրել ամեն տեսակ զրկանքներ, զոհել իսկ կեանքն իրենց գաղափարները մարմնացնելու համար, այդ ըէֆորմատորները նայում էին ամբողջ մարդկութեան վրայ այնպէս, ինչպէս իրենց վրայ։ Նրանք հաւատացած էին, որ համայն մարդկային հասարակութիւնը կարող է ունենալ նոյն զգացումները, նոյն ձգտումը, նոյն պատրաստականութիւնը, ինչ որ իրենք ունեն, որ իրենց վարդապետութիւնը կարող է իրականանալ հենց վաղը,— հարկաւոր է միայն քարոզել, հասկացնել նրա արդարութիւնը և օրինակներ ցոյց տալ։

Անցան դարեր, մէկ վարդապետութիւն փոխարինեց միւսին, շատ ըէֆորմատորներ զոհվեցին, բայց և այնպէս մենք տեսնում ենք որ մարդկութեան մի մասը, որի համոզվելն իսկապէս անհրաժեշտ է, որովհետև դրա ձեռքին է գտնվում անարդարութեան բանալին, դեռ ևս չի համոզվել, չի ուզում համոզվել և ոչ մի կերպ էլ չի համոզվել, քանի դեռ այդ իրեն ձեռնտու չէ։ Համոզէք քաղաքակրթված անգլիական լորդին, որ նա իրաւունք չունի իրլանդացիներին կեղեքելու, համոզէք բարձրագոյն ուսում ստացած գործարանատիրոջ, որ անարդար կերպով է իր գրպանը լցնում բանւորների աշխատանքը, համոզէք մեր բէկերին, աղաներին, որ հանգիստ թողնեն գիւղացիներին, համոզէք, վերջապէս, քրդին, որ նա ոչ մի բարոյական իրաւունք չունի Ալաշկերտցու տունը և ընտանիքը զափտելու...

Մի և նոյն ժամանակ պատմութեան դառն ու դաժան դասերն ակներև կերպով ցոյց տուին, որ մարդկութեան տանջված մասի հասկանալը, համոզվիլը, մինչև իսկ ցանկութիւնը բարեփոխել իր դառը վիճակը, բաւական չեն դեռ ևս յաղթանակը տանելու, որ անհրաժեշտ է ձեռք բերել, բացի այդ, և իրական ոյժ։ Բայց որովհետև այդ իրական ոյժը յանկարծակի չի ստեղծվում, որովհետև նա արդիւնք է գոյութիւն ունեցող պայմանների և փոփոխվում է այդ պայմանների փոփոխման համեմատ, ուստի պարզ է, որ ոչ մի հասարակական կազմակերպութիւն, որքան էլ նա իդէալական լինի, մի անգամից անկարելի է իրականացնել, որ այդ իդէալական կազմակերպութեան կարելի է հասնել միմիայն գոյութիւն ունեցող պայմանները բարեփոխելով։

Հենց այս պատճառով մենք ասպարէզ չենք եկել իբրև այն կամ այն ուտոպիական վարդապետութեան պատկանողներ, մենք չենք ձգտում մտցնել մեր կեանքի մէջ այս կամ այն «դաւանութիւնը» հանդերձ իր «հանգանակներով», մենք մեր ժողովրդին չենք նկարագրում այժմ այս կամ այն իդէալական հասարակական կազմակերպութիւնն իր բոլոր մանրամասնութիւններով: Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կենսական լինի. մեր ուշադրութիւնը, գլխաւորապէս, կենտրոնացած է մեր երկրի ներկայ դրութեան վրայ. մեր նպատակն է անողոք և անաչառ քննադատութեան ենթարկել մեր կեանքի ներկայումս գոյութիւն ունեցող պայմանները, բաց անել բոլոր այն ցաւերը, որից տանջվում է մեր բազմաչարչար ժողովուրդը, և հիմնված հասարակական գիտութեան դրական օրէնքների վրայ՝ պարզել այդ ցաւերի էական պատճառները ու միաժամանակ կատաղի կռիւ մղել այդ ցաւերը պատճառող փակտորների դէմ: Հիմնված նոյն դրական օրէնքների և երկրի ներկայ պայմանների վրայ՝ մենք կարծարծենք, կը պարզենք այն դրութիւնը, որն անհրաժեշտ ենք համարում փոխարինել ներկայիս:

Տեսնենք այժմ, ինչ է ներկայացնում մեր կեանքը:

Տաճիկները մեր երկրին տիրապետելուց յետոյ ամեն ջանք գործ են դրել մեր ժողովուրդը դարձնել մի կաստա, որի պարտականութիւնը լինի միմիայն աշխատել, արդիւնաբերել, ուրիշ ոչինչ: Հարկաւոր էր այդ ժողովրդին մշտական հպատակութեան տակ պահել և անարգել կերպով ծծել նրա արիւն-քրտինքով ձեռք բերած աշխատանքը: Հենց դրա համար անհրաժեշտ էր մեռցնել այդ տարրի պատերազմական ոգին, թողնելով նրան աշխատել եզան նման և այդ աշխատանքով կերակրել տիրապետող տարրը: Նրանք բնաջինջ արին մեր ազնուականութիւնը և իրենք բռնեցին նրա տեղը, նրանք խլեցին ժողովրդի ձեռքից սուր, հրացան, ամեն տեսակ պաշտպանութեան զէնքեր և թողին միայն մէկը՝ դութանը: Նրանք արտաքսել են մեզ զինուորական ծառայութիւնից և զինուորի փոխանակ մեզանից առնում են բազմատեսակ հարկեր կերակրելու իրենց զինուորներին և բազմաթիւ պաշտօնեաներին. ամենածայրայեղ դէպքերում, մինչև անգամ, չէին դիմում մեր օգնութեանը. երկիւղ կրելով, որ այդ զէնքը մի օր կարող է իրենց գլխին դառնալ: Մի խօսքով, տաճիկները ձգտել են մեզ դնել ճիշտ այն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ էին իլոտները սպարտացիների ձեռքին: Բարեբախտաբար, զանազան պատճառներով, որոնց մասին խօսելն այստեղ երկար կը լինի, այդ բանը նրանց չյաջողվեց, նրանց ձգտումը չկարողացաւ իրականանալ լիակատար կերպով: Բայց և այնպէս, երկրի ժողովրդի մէջ որոշվում էր երկու իրարից բաժանված, եթէ ոչ կաստա, գոնէ դասակարգ, հիմնված բռնի ֆիզիքական ուժի վրայ. մի կողմից՝ առանձնաշնորհեալ մուսուլման տարրը, միւս կողմից՝ բազմաթիւ քաղաքական իրաւունքներից զրկված քրիստոնեայ ժողովուրդը: Ժամանակի ընթացքում, գլխաւորապէս երկրի տնտեսական զարգացման շնորհիւ այդ երկու դասերի տարբերութիւնը աստիճանաբար նուազել է, բայց դեռ բոլորովին չէ վերջացել: Նա դեռ խիստ է զգացվում: Այդ անհաւասարութեան պաշտպանը, այժ տուողը ներկայումս տաճիկ կառավարութիւնն է: Պէտք է ուրեմն դէն ձգել այդ կառավարութիւնը, պէտք է ձեռք բերել ազգերի և դաւանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ:

Բացի այդ՝ երկրի ազգաբնակութեան մէջ տիրում է աչքի ընկնող կուլտուրական անհաւասարութիւն: Ազգաբնակութեան մի մասը՝ քիւրդը դեռ ևս վարում է կիսավայրենի, նոմադական կեանք և իր էութեամբ թշնամի է խաղաղ երկրագործ դասին: Շնորհիւ վերոյիշեալ անհաւասարութեան, հայ երկրագործ ժողովուրդը անկարող է լինում ինքն իրեն պաշտպանելու: Եւ տաճիկ կառավարութիւնը փոխանակ օգնութեան դալու կուլտուրապէս բարձր կանգնած խաղաղ, աշխատող տարրին, փոխանակ զսպելու այդ աւազակների անընդհատ յարձակումները, փոխանակ աշխատելու այս կամ այն միջոցով նրանց խաղաղ պարապմունքների դարձնելու, ընդհակառակը, ինքն է քաջալերում այդ աւազակներին, նրանց կողոպուտի մասն ինքն է ստէպ ստէպ վայելում և, վերջապէս, ինքն է բացարձակապէս, ափ-աշկարայ, նրանց զինում իր սեփական հրացաններով:

Բացի այս բացասական նշանակութիւնը, որ ունի տաճիկ կառավարութիւնը մասնաւորապէս հայերիս նկատմամբ, նա ունի և ընդհանուր նշանակութիւն իր բոլոր հպատակների վերաբերմամբ:

Սկզբներում, երբ տաճիկները նոր երևացին մեր կողմերը, երբ դեռ ամեն մի տաճիկ զինուոր էր, տաճիկ կառավարութիւնը համարեա թէ առանձին մարմին չէր կազմում: Նա նոյնն էր, ինչ էր համայն տաճիկ ժողովուրդը. նա ամբողջովին էր ծծում հպատակ ժողովրդների արիւնը: Բայց որովհետև այդ ահագին բազմութիւնը անկարող էր պահպանել իր գոյութիւնը կողոպուտով, թալանով, որովհետև ոչ մի հպատակ ժողովուրդ, որքան էլ որ նա աշխատասէր, արդիւնաբերող լինէր, ոչ մի հնարաւորութիւն չունէր իր աշխատանքի արդիւնքով կերակրել և դրանց, տաճիկ ժողո-

վերդի ահագին մասն ստիպված պէտք էր դիմեր խաղաղ պարապմունքների, ստիպված ինքն էլ պէտք էր արդիւնաբերեր, թողնելով հպատակ ազգերի աշխատանքով ապրելու արտօնութիւնը իր աւելի ուժեղ, աւելի ճարպիկ, աւելի խորամանկ մասին, որը և դառաւ երկրի տիրապետող տարրը: Այդ դեռ հերիք չէր: Խաղաղ պարապմունքի դիմած տաճիկ տարրը ոչ թէ միայն ստիպված էր հրաժարվել հպատակ ազգերին կեղեքելու իրաւունքից, այլ և հետզհետէ ինքն էլ ընկաւ նրանց դրութեան մէջ և նոյնպէս սկսեց կեղեքվել իր սեփական աշնուականութեան, իր սեփական կառավարութեան ձեռքից:

Հենց այդ կառավարչական մարմինն է, որ բաւականաչափ զրկվելով ազգաբնակութիւնից, ծանր կապարի նման ընկած է իր բոլոր խաղաղ և աշխատաւոր հըպատակների կրծքին: Նա ունի այժմ բազմաթիւ մը շտական զօրք, թնդանօթներ, վերջին ձևի հրացաններ. նրա հրամանի տակ են ոստիկանութիւնը, լրտեսների ահագին բանակը, դահիճները, նրա ձեռքին են բանտերը, աքսորավայրերը. և այդ իր ուժով նա ճնշում է և ծծում... Եւ վայ նրան, ով կը համարձակվի գլուխ բարձրացնել դրա դէմ, ով կը համարձակվի խլել դրանից կամ բոլորովին արգելել այդ ծծելու իրաւունքը: Լինի դա ապստամբ արաբ, տաճիկ սօֆտա, կամ հայ յեղափոխական, միևնոյն է: Դրանց դէմ են զօրքը, ժանդարմները, դրանց համար պատրաստ է բանտը, աքսորը, կախաղանը: Մարդկանց հոգեկան աշխարհը կաշկանդված է ամեն կողմից. հալածված է մտքը, հալածված է խօսքը, հալածված է խիղճը:

Այս բոլորին վերջ կարող է տալ միմիայն բռնի յեղափոխութիւնը, և մենք դիմում ենք նրան: Պէտք է թօթափել այդ խայտառակ լուծը, ոչնչացնել ներկայ միապետական բռնակալ ըէժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխութիւն, աշխատանքի ապահովութիւն, խղճի, խօսքի ու համոզմունքի ազատութիւն:

Սակայն այդ արտաքին բռնակալ լուծը հեռացնելը, ինքնավարութիւն ստանալը վերոյիշեալ քաղաքական իրաւունքներ ձեռք բերելը մենք մեր նպատակին հասնել դեռ չենք համարում: Դա միայն գործի մի մասն է: Միայն դրանով մենք չենք կարող ապահովել աշխատաւորին իր աշխատանքից լիակատար կերպով օգտվելու հնարաւորութիւնը: Աշխատաւոր դասի շահերի դիմաց կանգնած է և մի ոյժ, որը ներկայումս համեմատաբար թոյլ է, որը ներկայ պայմաններում դեռ հնարաւորութիւն չունի բացարձակապէս, իր ամբողջ ուժով արտայայտվելու և որը որոշ չափով ճնշված է բռնապետական ըէժիմի տակ: Այդ ոյժը տնտեսական զարգացման և դրա հետևանք՝ տնտեսական անհաւասարութեան ոյժն է:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԻՑ
(Շարունակ.)

Զալալցի ցեղապետ Աթաշ աղի տղան՝ Իբրահիմ աղան խփում, սպանում է իր հօրեղբօրը, որպէս զի տիրանայ նրա կալուածներին: Սպանվածի որդիքը պահանջում են "արեան գին": Աթաշ աղան հաւաքում է 30 սոմար Մանկասարից 15 սոմար Ղազիից և տասը սոմար Զերօ գիւղից:

Համիդեայ քրդերը չբաւականանալով հայերի կողոպտումից, Բասենու կողմից մի հարուստ թիւրքի տուն են կողոպտում և բերում Ալաշկերտ. իսկ կառավարութիւնը մեծ ջանք է գործ դնում, որ այդ գողացած իրերը յետ ստանայ. քրդերը չկարողանալով ամբողջովին պարտկել, Համիդէյի զօրքի ընդհանուր հրամանատար Ռահմի փաշայի խորհուրդով տանում են Զուլուն, Ղումլուպուճաղ Բուբղրան և Մանկասար հայ գեղերը և այդ գեղերի հարուստ ճանաչված մարդկանց խոտի դէզերում պահում առանց նոցա իմաց տալու (նախ ասեմ որ համարեա բոլոր հայ գիւղերի պահապանները քրդեր են. իհարկէ, վախենալով նոցանից պահապան են վարձում): Այդ բոլոր գործողութիւնը յայտնի լինելով պահապաններին, գնում յայտնում են փաշային և ղայմաղամին: (Ղայմաղամը մի քանի ամսայ եկած է քաղաքակրթված Ստամբուլէն): Գալիս շրջապատում են Մանկասար գիւղը, նախ բռնում են այն մարդկանց, որոնց խոտի դէզերում գտնում են այդ իրերը. կապում են և ուղարկում Ղարաքիլեայի բանդը: Իսկ դոցա կանանց հաւաքում են մի օդայի մէջ, որպէս թէ քննութեան համար. ղայմաղամը նախ բոլորին ծեծել է տալիս և ապա հրամայում է շիշեր կարմրացնել և դաղել նոցա ներքևի մասը...

Զաւուշներից մէկը տաճկական սովորութեամբ գեղացիներին համոզում է նախ, ապա հրամայում ասելով՝ 30 ոսկի հաւաքեցէք, ես կը տանեմ ձեր կողմից փաշային և ղայմաղամին և ոտը կընկնեմ, կը ներեն և այդ պատիժը չեն տար: 30 ոսկի փաշային և ղայմաղամին և մէկ ոսկի էլ զաւուշին տալով, թողնում են այդ պատիժը և ապա կանանցից սիրուններին առանձնացնում են, որպէս թէ համոզելու և խնդրելու որ գողացած իրերի տեղն ասեն. երկու ժամ առանձնացնելուց յետոյ... պահապանների առաջնորդութեամբ հանում են ապրանքը. 10 սոմար ցորեն էլ պահապաններն են ստանում, որպէս թէ, եթէ իրանք չլինէին, շատ նեղութիւն կը տային գեղին: Ապա իբրև տուգանք բանդարկեալներից 20 ոսկի են առնում և թողնում:

Բադնոցի Հուսէին փաշան քանդել է տալիս Բադնոցի, Զիրաքլու գիւղերի եկեղեցիները և գերեզմանոցները: Զիրաքլու մի նոր վանք կայ Նազարբաբա անունով, թէ հայ, թէ թուրք, թէ քուրդ ամեն տարի վարդավառին մեծ բազմութեամբ գնում են ուխտ. վանքի մէջ կայ երկու կուսի գերեզման. վանքը քանդելուց յետոյ,

քանդել է տալիս և գերեզմանոցը. քանդելու ժամանակ սկսում է գերեզմանից հառաչանքի ձայն. քանդողների ձեռները թուլանում են. նոքա թողնում են քանդելը: Հուսէին աղան այդ ժամանակ կատաղում է հայհոյելով՝ քուրդերին հրամայում է քանդել. իսկ քանդելու պատակն է լինում իր համար նոր տներ շինել տալը.

Իսկ տեղական հայերը հալածված՝ հեռանում են այդ կողմերից. ոմանք դէպի Աշշկերտ են գաղթում, ոմանք էլ դէպի Ռուսաստան:

ՆԱՄԱԿ ՏԱՐՈՆԻՑ
(Շարունակ.)

Քրդաց բարբարոս արարք. — Այսպէս, կառավարութիւնը մի կողմէ իր խժդժութիւնք ի գործ դնելով և միւս կողմէ քիւրդ ցեղերը ոտքի հանելով, Մուշ և Սասուն աւերակ դարձան: Ղէյպիան գիւղի մէջ Հանանցի աշիրէթէ երեք տուն քրդերէն Իսօ անուն քիւրդն նոյն գիւղի Մարտիրոսեան Շուշան անուն կոյսն փախցնելով, ուղղակի գայմագամանիստ Աւրա գիւղը կը տանի: Երբ հայերը գայմագամին կը դիմեն, գայմագամը և գատին հայ կոյսն ատեան բերելով, կը հարցաքննեն: Աղջիկը կը յայտարարէ. „հայ եմ և ազատութիւն կը պահանջեմ:“ Իսկ գատին կսկսի հայհոյել և սպառնալիքներ կարդալ, և երբ աղջիկն այս սպառնալիքներէն չընկճվիր, յայնժամ կը յանձնեն գատիին համոզել: Վերջապէս նրան կառնանգեն և բռնի կրօնափոխ կընեն:

Մշոյ արևմտեան լերանց վրայ գտնվող Կուարս գիւղացի Մարգար անուն հայի գոմի լրայ ճիպրանցի աշիրէթէն Իսօ անուն հռչակաւոր աւազակապետի խումբը (որ համիդեայ հեծելազօրաց հազարապետն է) յարձակվելով մի քանի եզ և 200 ոչխար կը տանի: Մարգարն գիտենալով կառավարութեան հայոց մասին եղած դիրքն, կը դիմէ ուղղակի Իսօի քով և ոտքերը ընկնելով, կաղաչէ, գէթ ոչխարաց կէս մասը դարձնէ: Իսօն, ցուցնելով ոչխարներն ու տաւարներն, կըսէ. „Թագաւորն ալ ես եմ, վալին ալ և ոչ մէկէն ալ ահ չունեմ: ահա ոչխարներդ, բայց չեմ տար:“ Խեղճ հայն դիմակոր ու յուսահատ ետ կը դառնայ:

Նոյնպէս Մշոյ հարաւ-արևմտային լերանց վրայ գտնվող Տալբցի քիւրդերը Տատրոգոմ գիւղի ընակիչ Ղէյպի եզը տանելով, հայ երիտասարդներն ետևներէն կիյնան և յիշեալ գիւղի մօտ քրդաց հասնելով, եզը կը բռնեն. բայց քրդեր յարձակվելով կսկսեն զարնել մերիւորները: Այդ պարագային հայ երիտասարդները թէև քիչ, բայց մեծ քաջութեամբ կսկսեն կռվիլ և քրդերէն մի քանի ծանր վիրաւոր գետին կիյնան. քրդաց թիւը կատաղարանայ, և Օվան ու Կիրօ անուն երիտասարդները ծանրապէս վիրաւորվելով, ետ կը դառնան: Հայերը սպառնան այս չարեաց մասին կառավարութեան դիմել: Քրդեր կսկսին պոռալ. „ոչ թէ մենք ձեր եզը բերած ենք, այլ դուք յեղափոխականներ կանցունէք այս և այն կողմ, և ատոր համար կեանքերնիս ալ կը զոհեմք. եթէ կը փափագիք, դիմէք կառավարութեան:“ Արդէն լոկ յեղափոխական բառը բաւական է կառավարութեան՝ գիւղեր ոտնակոխ ընելու, ոչնչացնելու և այլն:

Կառավարութեան կատաղութիւնք ի Խուլբ:

Սասնոյ արևմտեան կողմ գտնվող Խուլբ գաւառակն ևս գարնանէ ի վեր ալէկոծ մրրկին մէջ կը տատանի: Սաղտուն գիւղէն 12 երիտասարդներ առանց որ և է պատճառի մը ձերբակալվելով, գարնանէ ի վեր բանտի մէջ կը հեծեն: Նոյնպէս Ղզել-Աղաճ գիւղացի՝ 80 ամեայ ծերունի Տէր Մամբրէ քահանան, որն երկու տարի առաջ Ս. Կարապետի նուիրականութեան պաշտօնով կուզէր անցնել Տիգրանակերտի դաշտը, Խուլբ գաւառակի մէջ կառավարութիւնը ձերբակալելով, քանի մը քիւրդ աղաների երաշխաւորութեամբ հազիւ կը թողվի, սա պայմանով, որ այլ ևս Ղզել-Աղաճ չվերադառնայ: Երբ հալածանքն սկսվեցաւ ի Ղզել-Աղաճ և իր մերձակայ գիւղերն (տես նախորդ թղթակց.), մի քանի փախստական երիտասարդներու պատճառաւ, նախ կառավարութիւնը մեծ ջանք թափեց ձերբակալել յիշեալ քահանայի Արմենակ որդուն. երբ չյաջողեցաւ ձեռք բերել, ուզեց ձերբակալել սրա եղբայր Մանուկ 18 ամեայ պատանին. նա ևս խոյս տալէն վերջ, ձերբակալեց նոյն զաւակաց հայրն, վերոյիշեալ Մամբրէ քահանան ի Խուլբ և հետիոտն մինչև Կինճի միւթէսէրիֆութեան պաշտօնատեղին բերելով, ճանապարհին անլուր հայհոյանք և ամենամեծ նեղութիւն կուտան: Մի քանի շաբաթ սոյն բանտի մէջ պահելէ վերջ, կրկին նոյն օրինակ նեղութեամբ կը փոխադրեն Բաղեշոյ բանտը: Ցարդ կը մնայ նոյն բանտի մէջ: Քաջ գիտեմք, որ չտոկալով բանտի նեղութեանց իր վերջին ծայր ծերութեան պատճառաւ զոհ պիտի լինի տաճիկ կառավարութեան անպագ կրից, կարօտ մնալով փախստական զաւակաց տեսութենէն և աւերակ դարձած տան: Նոյնպէս Ղզել-Աղաճ գիւղէն փախստական լինելով յեղափոխական անուամբ Աստուածատուր Ա. Յովհաննէսեանի, Արթին Կարապետեանի, Մկրտիչ Սողոմոնեանի, Մօսիկ Թումայեանի, Յովհաննէս Տէր Պօղոսեանի եղբայրներն ուղեց ձեռք ձգել: Այժմ նոքա ևս աստ անդ թափառիկ լինելով, սոցա մայր, կին, քոյր, եղբայր, զաւակունք նօթի ու ծարաւ կը մեռնին: Այսպէս տաճիկ կառավարութիւն սովորութիւն դարձած է հայ տները աւերակ դարձնել . . . Նոյնպէս Անհարօնք գիւղէն ձերբակալված են Ռէյս Բէզ անուն հայն և Պարխէեան Մարտիկ անուն 15 ամեայ պատանին. վերջինիս մօտ գտնված է դպրոցական տետր մը, որոյ մէջ քանի մը ազգային երգ եղած է: Երբ պատանոյն մեծ սպառնալիք կը կարդան և ոստիկանք կսկսին մտրակով կապտուցնել մարմինը, պատանին քիւրդերէն կը թարգմանի երգերու պարունակութիւնը: Այս առթիւ կառավարութիւնը կատաղի գայլի պէս կսկսի ամեն տեղ վազել և լոկ գրելկարդալ գիտցողներու տները խուզարկել: Իրենց այսպիսի վայրենի խուզարկութեամբ հայ հասարակութեան վերայ մեծ սարսափ ազդած է: Այժմ թէ վերոյիշեալ ռէյսը և թէ պատանին բանտի մէջ կը հեծեն նօթի ու ծարաւ: Դեռ կառավարութիւնը իր հալածանքներ կը բազմապատկէ ի Խուլբ գաւառակն իր օժանդակ ունենալով քիւրդ Աշիրէթները:

Լսվեցաւ, որ յիշեալ ռէյս Բէզն Բաղեշի բանտի մէջ

նօթի ու ծարաւ թողնելէն մեռած է, և մեռեալ դիակի վրայ ևս անլուր չարչարանքներ տուած են, զարնելով, ճղտորելով և այլն։ Վերջապէս, եթէ կայ դժոխք մը՝ դա տաճկական բանտերն են։ Ցանցանք է Հայու մը Տաճկահայաստանում մարդկութեան նշոյլներ ունենալը. եթէ գտնվի այդպիսի մը, նորա բաժին բանտն, ու կախաղանն է... Այսօր ժողովուրդը վերին աստիճանի չքաւորութեան մէջ չգիտէ արդեօք իր ընտանեաց օրապահիկն հայթայթէ, թէ բանտարկեալները պահպանէ։ Թող հաւատան ընթերցողք, որ շատ մը բանտարկեալք բանտի մէջ այլ ևս չկրնալով անօթութեան դիմանալ, փափագ կը յայտնեն կրօնափոխ լինելուն։ Օրինակ, Մշոյ մէջ բանտարկեալ Գոմեր գիւղացի Արթին անուն երիտասարդն, որ քանիցս անօթութենէ նուաղած էր, բանտի առջևէն անցնող ծանօթներուն կը պոռայ. „ամօթ ու մեղք կը համարիմ մատնութիւն ընել, բայց ճարահատ ու յուսահատ կը դիմեմ կրօնափոխութեան՝ գէթ կեանքս ազատելու։“ Այսպէս է Տարոնոյ հասարակութեան և բանտարկելոց վիճակն։ Եթէ կան ճշմարիտ և անկեղծ հայեր, թող այս գլխաւոր պարագայի վրայ չափեն ընդհանուր վիճակը։ Արդեօք մինչև ե՞րբ այս կրակ ու բոցի մէջ տառապենք. այլ ևս համբերութիւնը մեզի համար յանցանք է և անգործութիւնը — դաւաճանութիւն։

ՆԱՄԱԿ ԲԱՍԵՆԻՑ

Կառավարութեան հալածանք ի Բասեն.— Թէև Բասեն ցարդ ազատ չէ մնացած կառավարութեան հալածանքներէն, բայց անլսելի եղած է հայ եղբարց։ Եթէ տնտեսապէս բաղդակից է Տարոնոյ, Խնուսի և շրջակայ գաւառաց, քաղաքականապէս արդէն նոցա հաւասար եղած է, մանաւանդ այժմ, երբ խիստ կը հալածվի կառավարութեան կողմէ։ Բասենը կը ճնշվի մանաւանդ այն պատճառաւ, որ սահմանագլուխ է, իբր թէ անց ու դարձ ընողներ կըլլան դէպի Կովկաս։ Արդարև կը շփոթիմ, թէ ինչպէս նկարագրեմ Բասեն գաւառակի վիճակն ևս։ Ահա ապրիլ 20-ը կանցնի, բայց նա դեռ բաւական ձիւնապատ է. ժողովուրդը վերջին ծայր չքաւորութեան մէջ կը տառապի, բայց կառավարութիւնը առանց ի նկատի առնելու հայ հասարակութեան նօթի և ծարաւ մեռնիլը, մի կողմէ ինքը կը հարստահարէ հարկահանութեամբ, ձերբակալութեամբ և այլն, մի կողմէ ալ քիւրդ տարրն բոլորովին վայրենացած, հայ գիւղեր ոտնակոխ կընէ կառավարութեան աչքի առջև, և կառավարութիւնը կուրախանայ քրդաց ամեն մի արարքներու վրայ. իսկ միւս կողմէն արդէն սովը կը մաշէ և կայրէ հայ հասարակութիւնն... Մեր հայրենաբնակ և օտարաբնակ հայ եղբարց ուշադրութիւնն կը հրաւիրեմք այս գաւառակի վրայ. մենք հաստատապէս գիտեմք սոցա ղէնք, ռազմամթերք չունենալը։ Թո՛ղ հայ եղբարք իրենց ձեռընտուութիւնը չխնայեն, հաստատ գիտնալով, որ եթէ փոքր յուզմունքներ ծագի, Տարոն, Խնուս, Բասեն և շրջակայ գաւառակներն արդէն կոչնչանան և կը կորսվին։

1893թ. Դեկտ. ամսոյ մէջ Բասենի Եաջան գիւղացի Պէրպէր Միսաք անուն անձը սպանված և ոչխարի պէս մորթված կը գտնվի։

1894 թ. Յնվ. ամսոյն Տոտի գիւղացի Պօղոս էֆ. Համազասպ ու Վարդան անուն երիտասարդները ի Կովկաս կանցնին իրենց ազգականաց տեսութեան առթիւ. վերադարձին կը ձերբակալվին կառավարութենէն զէնք բերելու պատրուակաւ և դեռ կը հեծեն Կարնոյ բանտի մէջ։

Կառավարութիւնը երկու ամսէ ի վեր սահմանագլխի գտնված Տէլի-Պապէ գիւղի մէջ 28 հեծեալ զօրք դրած է, որ պատահած դաղթականները ձերբակալելով, Հասան-Կալէի և Կարնոյ բանտերու մէջ կը լցնեն։ Երևակայեցէք թէ ինչ կը լինի այդ խեղճերու վիճակը, երբ անօթութենէ կը փախչին, կիյնան այդ գազանաց ձեռք։ Նամանաւանդ, նկատեցէք աստ տաճիկ զօրքի բարոյականութիւնը, երբ տեսնի օտար վայրերում ինկած հայոց կոյս աղջիկներ ու հարսեր...

Սոյն ոստիկանները գրեթէ աւազակախումբ կազմած են. Տէլի-Պապայի գիւղի մէջ հանդիպածը առևանգելէ և կողոպտելէ զատ, նոյն իսկ գիւղացիք պաշարման վիճակի մէջ դրած են։ Ապրիլ ամսոյ սկիզբ հայ պատանի մը մեռնելով՝ թաղելէ վերջ կառարկեն, թէ մեռելի պատրուակաւ գէնքեր կը պահեն գետնի տակ և երթալով գերեզմանը կը բանան և մինչև անգամ պատանքը կը ձևեն ու կը տեսնեն պատանւոյն դիակը։ Այլևս մեռեալներն անգամ հանգստութիւն չունեն գերեզմանի մէջ իսկ։ Ո՜հ անիծեալ բաղդ, ժամանակ և դրութիւն...

Ապրիլ ամսոյ 15-ին Հասան-Գալէի գայմագամը, ոստիկանաց հարիւրապետն 5 հեծեալ ոստիկաններով կը ձերբակալեն Հերթև գիւղէն Հայրապետ, Բալօ և Պօտօ անուն անձինք։ Առաջին երկուքն առանց որ և է պատճառի մը, իսկ վերջինս իբր թէ ի Կովկաս գնացած է։ Այս ամբաստանութիւնն ըրած է նոյն գիւղացի Հաճիպէյը, որ արդէն կառավարութեան կոյր գործիք և հայոց արեան ծծողն է. Սոցա ձերբակալման երկրորդ օրը զատիկ էր. ինչ կեանք կամ ինչ պիտի լինի այն ընտանեաց զատիկն, որոնց որդիները բանտերու մէջ նօթի, ծարաւ կը տքնին...

Քրդաց հարստահարութիւնք.— Պատիճուա գիւղի մէջ ցերեկով Մինաս անուն շրջուն վաճառականի վրայ քրդերը յարձակվելով մահուան աստիճանի հասցնելէ վերջ, գոյքերը կը տանեն։

Թորթան գիւղ քրդաց հարստահարութեանց այլ ևս։ Ջոկալով, բոլորովին ցիր ու ցան եղած է աստ և անդ Եագան գիւղի Մարկոսի տան վրայ յարձակվելով՝ մարդիքը կը կապկապեն. ընտանեաց մէջ աղմուկ և ժխոր կը փրթի։ Կսկեն տունը թալնել։ Այդ միջոցին հարկահան ոստիկանք միւս կողմէ գիւղի մէջ ծեծելով հարկ կը ժողովին. Նոցա ինչ հոգն է, թէ հայ տները իրենց աչքի առաջ կը թալանվին։ Վերջապէս չեմ կարծեր, թէ կայ գրիչ մը, որ սոցա բարբարոս արարքն պատմէ...

ՆԱՄԱԿ ԽՆՈՒՍԻՑ

Անցեալ իմ թղթակցութեամբ վեր ի վերոյ նշանակած էի Խնուսի և շրջակայքի (Մշոյ, Պուլանըգայ, Վարդավայ) գաւառակներու գաղթականութեանց մասին մի քանի տեղեկութիւններ։ Որքան կը յիշեմ անցեալ նամակիս մէջ գաղթականութեանց գլխաւոր պատճառ,

այս տարուայ երաշտութիւնը կամ հացի պակասութիւնը ցոյց տուի. և սակայն եթէ բուն պատճառն որոնենք դուրս կուգայ մէկ ուրիշ և ամենագլխաւոր պատճառ, որ վաղուց ի վեր գոյութիւն ունի, և հետզհետէ կը քայքայէ հայաստանցիներուն տնտեսական վիճակը. այդ է՝ թէ թուրք կառավարութեան և թէ քիւրդ տարրի հարստահարութիւնները, որոնց հետզհետէ թողուցած անբուժելի հետքերն, այսպիսի սուղ տարիներու մէջ, աւելի զգալի կը լինեն և կը ստիպեն խեղճ գիւղացիները գաղթել։ Ինչպէս հարիւրին 60 տոկոսով փող առնէ և հաց գնէ։

Այս գարնան մէջ պատահած երաշտութիւնն ու դէպքերն ուրիշ ժամանակներ ևս տեղի ունեցած են։ Սակայն այն ժամանակները ժողովուրդը տակաւին այսքան ընկճված չլինելով՝ կերպով մը առանց տեղէն շարժելու, գաղթելու իր ունեցածը կը ծախէր ու կապրէր, իսկ այս տարի եթէ չկրնար դիմանալ, բուն պատճառն այն է, որ երկար տարիներէ ի վեր թալնվելով, հարստահարվելով այլ ևս արժէքաւոր ոչինչ չէ մնացած, որպէս զի ծախէ և ուտէ։ Ամենաթանկագին հողերն անգամ արժէք չունին. կով մը երեք մէճիտիէի, ոչխար մը մէկ մէճիտիէի կը ծախվի։ Շատ գիւղացիներ ոչ միայն երկրորդական պէտքերն՝ այլ և բնական պէտքերն անգամ լրացնելու ոչինչ չունեն։ Ցորեկվան հագուստի տեղ գործածված ցնցոտիները գիշերը վերմակի տեղ կը ծառայեն, իսկ տակը խոտ է տէօշէկի տեղ։ Մինչին դասակարգին պատկանող գիւղացիի մը տան շարժական գոյքերը եթէ հաւաքես և ծախես (հողագործական գործիքներով միասին) բոլորը հազիւ 2-300 ղրշ. արժէ, բացի ոչխարներն ու տաւարները, որոնց սեփականութեան վրայ անգամ վստահ չէ, որովհետև կեանքի, պատուոյ և ընչից ապահովութիւն չը կայ։ Սա չափազանցութիւն չէ, այլ ճշմարտութիւն, ինչպէս ակնյայտնի կերևի ոչ միայն անցեալ նամակէս, այլ և հետևեալ դէպքերէն։

— Հոկտ. 28-ին Ղարաքէօփրիւցի Հիրապի եղբօր տղուն երկու եզները գիշերով կը տանին։

— Հոկտ. 30-ին Պուրնազայ 150 ոչխարը կը տանին օր ցերեկով Քէօշկ քրդաբնակ գիւղի քրդերը։

— Սեպտ. 28-ին Փայիկ (քրդբնակ.) գիւղի գլխաւորներէն Արիփ աղան, Եուսուֆ աղան և Ղասրմ հեծեալ և հետերնին 15 ծառաներ առած 2 էվիրմէ գիւղին վրայ կը յարձակին, բայց գիւղացիք կը դիմադրեն և մի քանին վիրաւորելով ետ կը փախցուցնեն առանց բան մը տալու։

— Հոկտ.-ին մէջ Արօս գիւղէն 10 կով և եզ կը տանին (1 կով Կոբէեան Մարտէին, 1 արջառ Քէօչէեան Մարգարին, 1 եզ Հարամիկցի Սարգսին, 1 կով Մօսէին, 3 եզ Պտէեան Խաչօին, 1 եզ Հազրօի տղային, 2 եզ Էնկէեան Սարգսին. վերջինիս սրտի վրայ այնքան կը ծեծեն, որ շնչասպառ տուն կը բերեն)։

Սոյն գիւղացի ուստայ Մարտոն և իր եղբօրորդին, որք զէնք ունենալու ամբաստանութեամբ ձերբակալված ու Կարին տարած էին. այս անգամին Կարնոյ բանդին մէջ տրված չարչարանքին չդիմանալով եղբօրորդին կը մեռնի. իսկ առաջինը, ուստայ Մարտոն, այս ծերունին բերդ փոխադրվելով ցարդ կը մնայ։

— Հոկտ. ամսոյ մէջ սոյն Արօս գիւղի քիւրդ հովիւը գիւղացւոց լաւ ոչխարներէն 5 հատ զատելէն և իր հայրենակից Մոլլախուլաճցիներուն յանձնելէն և տարված ոչխարները արդէն սարը անցնելէն վերջ, հաւար կը կանչէ։ Գիւղացիները, թէև իրողութիւնը կը հասկնան, բայց չեն համարձակիր տրտնջալու, քանի որ հովիւը մի քանիներու պաշտպանեալն է։

Ցաւալի է ըսել որ մեծաւ մասամբ հայ գիւղացւոց մէջ ախտ դարձած է հովիւները, տեղերու ու գիւղերու պահապանները քիւրդ կարգել, սա սխալ կարծիքով թէ քիւրդը՝ քրդուն խաթրը համարելով՝ իրենց չի վնասեր, բայց իրականութիւնը սա է, որ քրդերն իրենց պաշտօնավարութեան միջոցին ամեն ծակն ու ծուկը լաւ ուսումնասիրելով՝ յարմար ժամանակին առիթը չեն փախցուներ ուզածնուն պէս մտնելու և գողնալու։ Քրդերն առհասարակ իրենց ծանօթ հայերէն կը գողանան քան թէ անծանօթներէն. ծանօթներու տուն գողութեան դնացած ժամանակներ այնպիսի համարձակութեամբ կը մտնեն, որ եթէ տեսնվին բարեկամ, ծանօթ են, իսկ եթէ չտեսնվին արդէն գող են։ „Տին ազըմ, նա տին տըզըմ“. այսինքն „տեսան՝ ես եմ, չտեսան՝ գող եմ“։

Նոյեմ. 1-ին Արօսի պահապան Խաչորեան Մարտոն իւր քուրդ ընկերի հետ կը տեսնին հինգ վեց քրդեր, որք տան մը պատը կը ծակեն։ Մարտոն գովելի քաջութեամբ գողերու հետ կը կռուի և դաշոյնի հարվածով մէկին կը վիրաւորէ, որ վերջը կը սատկէ, իսկ ինքը սիւրմէլի գնտակով գետին կը փռվի։ Կռվի ժամանակ քիւրդ ընկերը զինք մենակ թողնելով կը փախչի. որմէ խրախուսած քիւրդ գողերը թէև կը յաղթեն հայուն, բայց առանց բան մը կարենալ տանելու փախուստ կը դիմեն։ Այդ գողերն Մոլլախուլաճցիներն եղած են, որոնց վրայ գանգատն անօգուտ եղաւ։

Նոյեմ. 6-ին Ղօզլու գիւղի մօտ Պուրհանցի քրդերը, Սատոի տղան Խալօն և երեք ճէլալցի քրդեր, պանդըխտութենէն գնացող Պուլանճցի 20-ի չափ հայեր կը թալնեն. վնասը կը հասնի 50-60 ոսկի. Գանգատ եղած է կառավարութեան, բայց անլսելի մնացած է, ինչպէս և ամեն գանգատ։

Նոյեմ. 7-ին երկրի խաղաղութիւնը պահպանելու պատրուակաւ Խնուս եկած զօրաց մի քանին Շապատին և Մարուֆ գիւղերը գալով իրենց ձիոց կերցնելու համար գարի կը պահանջեն։ Գիւղացիք աղաչանքով կը յայտնեն, որ իրենց գիւղում բնաւ գարի չկայ։ Բայց զօրքերը, ծեծելով, հայհոյելով անպատճառ գարի կուզեն։ Վերջ ի վերջոյ կը համաձայնին, որ գարիի տեղ ցորեն տան։ Այս անգամ զօրքերը՝ ցորենը ձիանք չեն ուտեր ըսելով՝ կը պահեն հետերնին տանելու և կերթան խոտերու դէզերէն բռնի խուձերը բերելու։ Ասոր վրայ բարկացած հայերը „զորս դու պատուիրեցեր“ լաւ դաս մը կուտան զօրաց։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Մայիսի սկզբները հոս ձերբակալեցին Եղիա Բաբերդցեան երիտասարդը, որ 10–15 օր առաջ վերադարձած էր Սամսունէն, ուրտեղ երկար ատենէ ի վեր առևտրական գործով կը գտնվէր։ Եղեան Սամսոն կը հիւանդանայ և, տեսնելով, որ հիւանդութիւնն օր աւուր կը ծանրանայ, կը վճռէ Տրապիզոն վերադառնալ և հոն, իր ընտանեաց գրկին մէջ դարմանվիլ։ Եղիան եկած օրէն անկողին կը մտնի և բժիշկ կը հրաւիրվի զինքը դարմանելու։ Բայց հիւանդի վիճակն օր աւուր կը ծանրանայ և շուտով ամբողջ ընտանիքը մահուան երկիւղի մէջ կընկնի։

Օր մը յանկարծ Եղիայի մեծ եղբայրը—Սարգիս Բաբերդցեանը, քանի մը ոստիկաններ խանութին մէջ կը ձերբակալեն առանց պատճառի, առանց որ և է բացատրութեան, բռնութեամբ կառավարութեան տունը կը տանին։ Հոն Սարգիսէն կը պահանջեն իր եղբօր տեղն ըսել. հակառակ պարագային կը սպառնան զինքը եղբօր տեղ բանդարկել և բանդին մէջ փթեցնել։ Խեղճ մարդը նախ կը զարմանայ, կուզէ եղբօր յանցանքն իմանալ, որով աւելի կը գրգռէ թուրքական դատաւորներուն։ Ասոնք քանի մը ծանր ու անարգական խօսքերով կը լռեցնեն Սարգիսը և կառաջարկեն ընտրել երկուսէն մէկը. կամ եղբօր տեղը ցոյց տալ կամ բանդ նստիլ։

Ան ատեն Սարգիսը կը յայտնէ եղբօր տեղը և կաւելցունէ, որ եղբօր վիճակը բաւական երկիւղալի է։

Այս լուրն առածին պէս, իսկոյն քանի մը փոլիս և զաֆթիաներ կը կանչվին և Սարգիսի հետ տուն կուղարկվին Եղիան ձերբակալելու անմիջապէս։ Փոլիսները ճիշտ Սարգսի պատմածի պէս կը գտնին եղբօրը, բայց և այնպէս կուզեն բանդ փոխադրել. ընտանիքը կը հակառակի և թոյլ չի տար։ Կառավարութեան հրամանով Բէլիտիէի (քաղաքական) թուրք բժիշկը կուղարկվի քննելու հիւանդի վիճակը. ընտանիքի կողմէն ալ կը հրաւիրվին թէ հիւանդը դարմանող և թէ այլ բժիշկներ։ Թուրք բժիշկը կը յայտնէ, որ կարելի է հիւանդը հիւանդանոց փոխադրել և հոն դարմանել. միւս բժիշկներն ընդհակառակը կը պնդեն, որ հիւանդի վիճակը ծանր է և փոխադրութիւնը կրնայ վատ հետևանքներ ունենալ։ Կառավարութիւնն իրեն բժշկին կը լսէ և կուզէ հիւանդը փոխադրել. հիւանդի մայրը, եղբայրը կաղաչեն, որ քանի մը օր թոյլ տան, մինչև հիւանդը քիչ մը կազդուրվի, ետքը փոխադրեն, բայց անօգուտ։ Ան ատեն եղբայրը կը խոստանայ, ամեն երաշխաւորութիւն կուտայ, նորէն կը մերժվի և հիւանդը բռնի կը փոխադրվի բանդը։

Եղիայի բանտ փոխադրած ժամանակ բացված տեսարանը յոյժ սրտաճմլիկ էր. կարծես Բաբերդցեաններու տունէն երիտասարդ Եղիայի դագաղը գերեզմանոց կը տանէին։ Եւ գաւառական բանտերը և անոնց հիւանդանոցները ճշմարիտ գերեզմաններ են, միայն այն տարբերութեամբ, որ հիւանդանոցներու հիւանդները կենդանի մեռեալներ են։

Քանի մը օրէն Եղիան Պոլիս կուղարկեն։ Անոր ընտանիքը պատահաբար այդ կիմանայ։ Ծերունի մայրը և եղբայրը նաւամատոյց կիջնեն վերջին անգամ տեսնելու, գուցէ և վերջին անգամ համբուրելու Եղիան, որու յանցանքը մինչև վերջը չկրցին իմանալ։ Կը լսվի թէ Սամսոնի հայ և թուրք անխիղճ լրտեսներու բազմաթիւ զոհերէն մէկն ալ Եղիան է։ Փոլիսները և ոչ իսկ մօտ կը թողուն զառամեալ մօրը. մայրը կաղերսէ, անգութներու գութը շարժելու խօսքեր կըսէ, բոլորն անլսելի կը մնան։ Եղիան, չնայելով իր հիւանդ ու ծանր վիճակին, այս սրտաշարժ տեսարանին չի դիմանար. կը բռնկի, կը բողոքէ և քանի մը խօսք կը նետէ անսիրտ ոստիկաններուն, որոնք հիւանդին կից մը տալով՝ նաւակը կը նետեն և շոգենաւ կը փոխադրեն, անկէ ալ Պոլիս։ Ցարդ ո՛չ մէկ լուր, ո՛չ մէկ տեղեկութիւն ընտանիքը չկրցաւ առնել Եղիայի գոյութեան և ուր գտնվելու մասին։ Արդեօք Եղեան կենդանի՞ է, թէ մեռած, Սև ծովուն, թէ Մարմարայի ալիքներուն կուլ գնաց, յայտնի չէ։

Սամսոնէն հոս շղթայակապ 15 հայ բանտարկեալներ բերվեցան։ Բանտարկեալներու մեծագոյն մասը Շ. Գարահիսարցի են, քանի մը, հոգի Սամսոնցի, 2–3 հոգի ալ Տրապիզոնցի։ Ասոնց ձերբակալած են որպէս յեղափոխականներ։ Ոմանց քով զէնքեր, ռազմամթերք և հագուստ են գտեր։ Ասոնց դատը հոս պիտի տեսնվի, բայց խնդրած են, որ իրենց դատը Պոլիս տեսնվի, որովհետև գաւառական դատարաններու վրայ վստահութիւն չունեն։ Անոնց բողոքն անհետևանք են թողուցեր։

Տրապիզոնի գիւղերը գարնան ի վեր կը պտտի 12 անձէ բաղկացած տաճկական աւազակախումբ մը և անլուր վնասներ կը հասցունէ հայ գիւղացիներուն։ Այս աւազակային խումբը կարծես դիդմամբ կազմված է միմիայն հայերուս համար։ Օր մը չանցներ, որ այս աւազակները հայ մը չկողոպտեն, տուն մը չթալանեն։ Անցեալներ այս աւազակային խումբը գիւղէն հարս մը կը տանի մօտակայ անտառը։ Ամբողջ գիշերը կարգով կը լլկեն հարսը և լուսադէմին ուժասպառ հարսը կը ձգեն, կը մեկնին։ Հարսը, երբ քիչ մը ուշքի կուգայ, մեծ դժուարութեամբ ինքը զինքը տուն կը ձգէ։ Կառավարութեան բողոքեցին. ինչպէս շատ մը բողոքներ, այս ալ անլսելի թողուցին։ Աւազակային խումբը դեռ կը շարունակէ անպատիժ իր ասպատակութիւնները։

Սամսոնէն կը գրեն մեզ, որ Սեբաստիայէն բերին և Պոլիս ուղարկեցին ասկէ 3 ամիս առաջ խումբ մը հայ բանտարկեալներ, որոնց ճամբուն սարսափելի տանջանք, չարչարանք էին տուել։ Ճամբան զինուորները բռնաբարած են պստիներն և այն աստիճան ծեծած ու տանջած են, որ այս դժբաղդներէ մէկը ճամբան մեռեր է։ Այս խմբի մէջ էր և քահանայ մը՝ Վահան Ժամկոչեան, իսկ միւսներու անուններն էին. Վարդան Ճերմակեան, Գրիգոր Քէշիշեան, Յակոբ Խանճեան և Պետրոս Էքսիրճեան։

Թէնիքէչի Նիկողոս անուն հայ լրտես մը, որ երկար ատեն է ի վեր կը շրջէր Պարտիզակ, Թզմիտ և շրջակայ գիւղերը յեղափոխականներ փնտռելու և այդ կողմերու հայերը լրտեսելու համար, ոչինչ չկրնալով գտնել, անլուր զրպարտութիւնների դիմեց և բազմաթիւ

ձերբակալութիւններ ընել տուաւ։

Լրտես Նիկողոսը, որին ուղարկած էր կառավարութիւնը, կը մատնէ Պարտիզակի Նշան և քանի մը հարուստ հայեր։ Կառավարութիւնը անմիջապէս քանի մը փօլիսներով, զինեալ զապթիաներով կը կոխէ ասոնց տունները, խիստ խուզարկութիւններ կընէ, բայց ոչինչ չեն գտներ։ Քաղաքի մէջ կը ձերբակալեն ընդամենը 20 հոգի առանց որ և պատճառի, առանց որ և է փաստի և հաստատութեան։ Շատերը բաւական ստակ կերցնելով, կաշառքներ տալով ազատ եղած են, բայց Նշան աղան և ուրիշ 4 հարուստներ, որոնք կը զրպարտուին իբրև յեղափոխականներ, փոխադրվեցան Պոլիս։ Անոցմէ մեծագնեակ գումար մը պահանջեր են, մերժվեր են. ուստի զայրացած ծանր ու շինծու ամբաստանութիւններով շղթայակապ Պոլիս տարվեցան։ Տարակոյս չկայ, որ Նշան աղան և իր ընկերները բոլորովին անմեղ, դըժուար թէ արդարանան առանց դատաւորներու դրամները ոսկիով հաստատելու։

ԿՈՒԻ ՍԱՀՄԱՆԱԳԼԽՈՒՄ

Մեր մի կոմիտէից ստացած նամակից քաղում ենք հետևեալը.—

Սահմանագլխում մեր հրոսակային խմբերից մէկը յանկարծ պատահում է տաճկական կանոնաւոր զօրքին։ Վերջիններս տեսնելով տղերանցը, սկսում են հրացան արձակել։ Առաջնորդը, որը մի վիթխարի, քաջ և համակրելի երիտասարդ է, դեռ աշխատում է որքան կարելի է լռութեամբ վերջ տալ գործին, բայց տեսնելով, որ թշնամին չի խնայում իրանց և ամենայն արագութեամբ մօտենում է, հրամայում է տղերանցը ետ դառնալ և դիմադրել։ Տղերքը իսկոյն դառնում են դէպի թշնամին, մանաւանդ երկու ռուսաստանցիները — Ալէքսանդրապօցիք — և մէկից տասը հրացան արձակում թշնամու վերայ և դարձեալ շարունակում իւրեանց ճանապարհը։ Հենց առաջին դիմադրութիւնից յետոյ թշնամին բոլորովին լռում է և փախչում մօտակայ Ղարաքիլիսա, գայմագամանիստ գիւղը և եղելութեան մասին իմաց տալիս այնտեղի զօրքի հրամանատարին և գայմագամին։ Այս անգամ ահագին ուժով դիմում են դէպի դիմադրութեան տեղը և ահագին աղմուկ բարձրացնում։ Բայց արդէն ուշ է լինում, որովհետև տղերքը իրենց հետքը կորցած են լինում։ Զօրքը ցրվում է զանազան կողմեր, որպէս զի գտնի „աւազակներին“։ Վերջապէս երկար դէս ու դէն ման գալուց յետոյ զօրքերին հանդիպում է տղերանցից մէկը, որը մթութեան մէջ կորցնելով ընկերներին, վերադառնալիս է եղել դէպի մեր կողմերը։ Սրան բռնելուն պէս սկսվում է տաճկական աննկարագրելի տանջանքը՝ ընկերների ով լինելը և ուր գնալն իմանալու նպատակով։ Բայց մինչև այժմ ոչ ոքի անուն չի տուել բռնվածը. տաճիկների բոլոր հարցերին նա պատասխանել է, որ իրենց դիմադրողը միայն ինքն է եղել և ուրիշ ոչ ոք։ Երկար չարչարելուց և ոչ մի տեղեկութիւն չստանալուց յետոյ, խեղճին կալանաւորված ուղարկում են Հասան-Ղալա։ Սրան միացնում են և մի ուրիշ երիտասարդ, որին բռնում են զազախները ռուսաց հողի վրայ և յանձնում տաճիկներին։

Նոյն դէպքի առթիւ Տաճկաստանի մեր թղթակցից ստացել ենք հետևեալը.—

Յունիս ամսոյ 20-ին Տաճկահայ երիտասարդներէ կազմված մի խումբ մտադիր էր անցնել Հայաստան և գործել ժողովրդի օգտին։ Երբ տաճկաց սահմանագլուխ Գարաքիլիսէ քրդաբնակ գիւղի քով կը հասնեն, պահապան զօրքերը առջևները կտրելով կը պառան անձնատուր լինել։ Նախ խումբը խոյս կուտայ դէթ անվնաս անցնելու նպատակաւ, բայց երբ զօրքերը կսկսեն հրացանի գնտակներ տեղացնել, խմբի առաջնորդող ազնիւ երիտասարդը կը պառայ. „տղայք, ետ դարձէք, ամեն տեղ մահը մի է“։ Գիշերային խորը լռութեան մէջ կը սկսեն օրինակելի քաջութեամբ դիմադրել։ Մօտակայ Մուղարաճուղ, Արփաչայ, Փօրիկ և Գարաքիլիսէ քիւրդաբնակ գիւղեր հաւարի կը հասնեն և չորս կողմն կը շրջապատեն։ Վերջապէս 4 ժամ շարունակ կռուելով և խոյս տալով, բաւական տեղ հեռանալէ վերջ, քրդաց օգնութեան կը հասնին 40 հեծեալ զօրք ևս։ Յայնժամ կրկին կը սաստկանայ կռիւը։ Վերջապէս կը յաջողին երկու զօրք դետին փռել և ազատվել, իսկ ոստիկանք և քիւրդերը կը յաջողին Առաքել և Մկրտչ անուն երիտասարդները ձերբակալել. վերջինիս սաստիկ կը գանակոծեն. խարազանը կապոյտ հետքեր կը թողու, բայց ընկերների անուն տալ անհնարին կը լինի։

Լոյս տեսաւ

ԳԻՏԱԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄ (Թարգման.)

Հեղինակ. Ֆրիդրիխ Էնգելսի

Մեր խմբագրութիւնից կարելի է ստանալ նոյնպէս.

1. Ապստամբական Ոգի.
2. Յեղափոխական կեանքից.
3. Գաղտնի Տպարան։

Պատրաստվում է

ԿՈՒԿՈՒՆԵԱՆՏԻ ԽՄԲԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Նուիրատվութիւնների ցուցակ.—

Վրէժից 10ր. Խաչագողից 12ր. Սարաբարայից 5ր, Զալլատեանից 20ր. Անկելանոցից 23ր., 30ր., 197ր., 129ր., 21ր., 21ր., 90ր., 63ր., 42ր., 62ր., 77ր. Գնձ. 100ր., 200ր., 50ր., 150ր. Կայծիկից 21ր., 110ր. 35ր., Ց. Մ-ից 10ր. Ստ. Թ-ից 15ր. Արցախից 18ր. Վարդաթաշէնից 20ր. Բգ.-ից 600ր., 200ր. Երն.-ից 100ր. Զ.ք. կան. խմբ. 32ր. Երն.-ից 60ր. Օգս.-ից Մնա.-ից 20ր. Ս. Շ.-ից 80ֆր. Ս. Ա.-ից 100ֆր. օր. Շ.-ից 20ֆր. Շ. ք. Շ.-ից 30ր. Բթմ.-ից 45ֆր. Փթ. 20ր. Բգ.-ից 30ր. Խնդ.-ից 10ֆր.

(Կը շարունակվի)

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թղթակցութեան և նուիրատվութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան